

## Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ – 2022թ.

Հարցաշար - 11-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Աշխարհակալ Մակեդոնացին մի շարք **երկրներ** նվաճելուց հետո քառասմբակ ուղևորվեց դեպի արևելք: Գոտևորելով վիմակարկառ բարձունքին բազմած հայոց ամրոցներից մեկը՝ բանակ զարկեց բերդի խանդակների շուրջբուրրը: **Համոզված** էր, որ հայերն իսկույն կբացեն բերդի դարպասները՝ հերթական հաղթանակը բերելով իր գործին: Եթե այնքան խելամիտ չգտնվեն և դիմադրություն ցույց տան երբևէ պարտություն չտեսած գորավարին, ինքն առանց երկբայելու իսպառ առաթուր կանի ամեն ինչ:

Ի գարմանս Մակեդոնացու՝ հայ քաջորդիները երեք օր մաքառեցին թշնամու խոլական գրոհների դեմ՝ ի չիք դարձնելով աշխարհանվաճ **գորականի**՝ ամրոցը մեկ շնչով **գրավելու** անվարան նկրտումը:

**Չորրորդ օրը՝ վաղորդային**, երբ տվնջյան լուսատուն ոգորելով ճեղքում էր ցայգալույսի աղջամուղջը, ժամապահները նկատեցին, որ բերդի աշտարակից մի լավաշ է կախված: Կարծելով՝ պաշարյալներն անձնատուր են լինում, լուրը զեկուցեցին տիրակալին: Վերջինս համրաքայլ դուրս եկավ վրանից: Հետո խոհուն մի **հայացք՝ աշտարակին** գամված, և իմաստուն այրը խրոխտաձայն ասաց.

– Անհապաղ վերացնե՛լ պաշարումը. մենք հեռանում ենք ամրոցից:

1. Մեկնաբանի՛ր Մակեդոնացու որոշումը և հայերի արարքը 2 նախադասությամբ: (2 միավոր)
2. Գրի՛ր քառասմբակ, վիմակարկառ, խանդակ, երկբայել, առաթուր, խոլական, նկրտում, տվնջյան, ոգորել, ցայգալույս բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
3. Դու՛րս գրիր ուղևոր, ազնվայր, ամենակարող, վերնախավ, այլակ, զգայուն, ապիկար, դերասան, սակավաթիվ, բացարկ բառերի երկրորդական բառակազմական ձևույթները: (2 միավոր)
4. Դուրս գրի՛ր այն բառերը, որոնց հոգնակին կազմվում է **–ներ** վերջավորությամբ. ստուգայց, տեսակետ, անասնակեր, մթերք, խմբագիր, ստեղնաշար, պատճեն, բաղաձայն, հորատանցք, սիրամարգ, կարմրախայտ, խաչքառ, մակաբույծ, ծառ սկյուռ, զարդեղեն, մորաքույր, շատակեր, ոտնաձայն, ստորակետ: (1 միավոր)
5. Դու՛րս գրիր տեքստում գործածված անկանոն բայերը: (1 միավոր)
6. Նշի՛ր հետևյալ բառերի խոսքիմասային պատկանելությունը (ըստ բնագրում կիրառված գործածության), նրանց տեսակը. **դեպի, շուրջբուրրը, համոզված, որ, այնքան, իսպառ, ամեն ինչ, երբ, տվնջյան, հետո**: (2 միավոր)
7. Գրի՛ր անորոշ դերբային բնորոշ հինգ հատկանիշ: (2 միավոր)
8. Տեքստում ընդգծի՛ր միակազմ նախադասությունները, նշի՛ր տեսակը: (1 միավոր)
9. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «**Ես մի շիվն եմ իմ հողի**» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)